ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

• ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության պետի պաշտոնակատար ՍԵՎԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ

• ՔԱՂԱՔ /ԵՐԿԻՐ/ԺԱՄԿԵՏ

Վաշինգթոն, Շարլոթ, Մինեապոլիս, ԱՄՆ, հոկտեմբերի 15-25-ը, 2017 թ.

• ՆՊԱՏԱԿԸ

- ✓ **Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներում և նահանգներում թանգարանային գործի, մասնավորապես՝ թանգարանային մենեջմենթի (կառավարում) ու մարքեթինգի (շուկայնացում) ուսումնասիրում և փորձի փոխանակում:**
- ✓ **Հանդիպումներ Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներում և նահանգներում գործող թանգարանների ներկայացուցիչների հետ՝ մշակութային փոխհամագործակցության հնարավոր ուղղությունների մշակման և քննարկման նպատակով:**

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության և ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ, «Միջազգային այցելու» ծրագրի շրջանակներում ս. թ. հոկտեմբերի 15-25-ը Հայաստանի Հանրապետության մի քանի թանգարանների

տնօրենների ու աշխատակիցների հետ միասին մեկնեցի ԱՄՆ՝ ուսումնասիրելու թանգարանային մենեջմենթի և մարքեթինգի վարման ամերիկյան մեթոդները, փոխհամագործակցության ուղղություններ մշակելու ամերիկյան մի շարք թանգարանների հետ:

Հայաստանից մեկնած խումբը բաղկացած էր 8 անձից:

Հոկտեմբերի 15-ին ժամանեցի ԱՄՆ մայրաքաղաք Վաշինգթոն:

Հոկտեմբերի 16-ին հանդիպում ունեցա ծրագրի կազմակերպիչների և պատասխանատուների հետ: Ծրագիրը գլխավորում էր ԱՄՆ պետդեպարտամենտի հարաբերությունների բյուրոյի անդամ, դոկտոր Հրաչ Վարժաբեդյանը, ծրագրի համակարգողներն էին Շաբա Լայթֆութը և Լիքինգ Ֆենգը: Քննարկվեցին ծրագրի շրջանակներում կազմակերպվելիք հանդիպումների ձևաչափերն ու ժամկետները:

Այնուհետև հանդիպեցի «Capital Communications Group» կազմակերպության համահիմնադիր և նախագահ Աքրամ Էլիասի հետ: Վերջինս մոտ մեկ ժամանոց դասախոսություն կարդաց՝ նվիրված ԱՄՆ-ում կիրառվող թանգարանային կառավարման համակարգի լուսաբանմանը:

Նույն օրվա երկրորդ կեսին այցելեցի Հոլոքոստի թանգարան, որտեղ, նախ, հյուրընկալվեցի թանգարանի էքսկուրսավար Պաուլա Ջեյքոբսի կողմից, ապա հանդիպում ունեցա թանգարանի միջազգային ծրագրերի համակարգողներ Անդրեա Բերթրանդի և Ալիսա Ֆիշմենի հետ: Այս և յուրաքանչյուր հաջորդ թանգարանում առաջին հերթին քննարկվում էին թանգարանային մենեջմենթի և մարքեթինգի վարման ամերիկյան մեթոդներն ու փորձը: Հաճախ ուշադրության էին արժանանում թանգարանային գործի այլ խնդիրներ ևս: Տվյալ դեպքում մասնավորապես քննարկվեցին նաև Հոլոքոստի թանգարանի ստեղծման նախադրյալների և

ընդհանրապես ցեղասպանության թանգարան ունենալու հետ կապված մի շարք հարցեր:

Հոկտեմբերի 17-ին հայկական խմբի առաջին այցը ճանաչողական բնույթի էր՝ ԱՄՆ Կոնգրեսի գրադարան: Խմբի անդամների համար էքսկուրսիա անցկացրեց գրադարանի հայկական և վրացական բաժինների մասնագետ, դոկտոր Լևոն Ավդոյանը:

Այնուհետև հանդիպում ունեցա ԱՄՆ ամենախոշոր մշակութային և գիտակրթական կառույցներից մեկի՝ Սմիթսոնյան ինստիտուտի ներկայացուցիչների հետ: Սմիթսոնյան ինստիտուտի մեջ են մտնում 19 թանգարաններ և պատկերասրահներ, 9 գիտահետազոտական կենտրոններ, ինչպես նաև «Ազգային կենդանաբանական այգին»: Սմիթսոնյան ինստիտուտն ամեն տարի ավանդական մշակույթին, ժողովրդական արհեստներին նվիրված փառատոն է կազմակերպում աշխարհի որևէ երկրի թեմատիկայով. 2018-ին այն նվիրված է լինելու Հայաստանին: Քննարկումների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց Սմիթսոնյան ինստիտուտի և Հայաստանի միջև այդ առթիվ առկա համագործակցությունը շարունակելու և խորացնելու վերաբերյալ:

Հաջորդ այցը Սմիթսոնյան ինստիտուտին պատկանող «Ամերիկյան հնդկացիների ազգային թանգարանում» էր, որտեղ հայկական խմբի համար էքսկուրսիա անցկացրեց թանգարանի աշխատակցուհի Կարոլին Ռապկիևյանը: Քննարկվեցին վերջերս հիմնված թանգարանի ստեղծման նախադրյալների և կառավարման մի շարք հարցեր:

Օրվա վերջում այցելեցի Սմիթսոնյան ինստիտուտին պատկանող մեկ այլ կառույց՝ «Աֆրիկյան ամերիկացիների մշակույթի և պատմության ազգային թանգարան»: Այցի ընթացքում հանդիպում-զրույց ունեցա թանգարանի միջազգային համագործակցության բաժնի ղեկավար Ջոն Ֆրենքլինի և Օքլահոմա նահանգի սենատոր Քևին Մեթյուզի ղեկավարած պատվիրակության հետ:

Հոկտեմբերի 18-ի վաղ առավոտյան Վաշինգթոնից մեկնեցի Հյուսիսային Կարոլինա նահանգի Շարլոթ մայրաքաղաք:

Այդ օրը այցելեցի երեք թանգարան: Առաջինը «Կարոլինայի օդագնացության թանգարանն» էր, որտեղ ինձ հյուրընկալեց թանգարանի փոխտնօրեն Քեթի Սվարինգենը: Այս թանգարանում է գտնվում «Հուդզոնյան հրաշք» կոչվող հայտնի ինքնաթիռը, որի արկածային ու դրամատիկ պատմությունը չի շրջանցել անգամ Հոլիվուդը՝ Թոմ Հենքսի մասնակցությամբ 2016 թվականին նկարահանելով «Սալի» ֆիլմը: Ըստ փոխտնօրենի՝ հիշյալ ինքնաթիռը թանգարանում որպես ցուցանմուշ ներառելը ուղիղ տասն անգամ ավելացրել է թանգարանի այցելությունների թիվը:

Օրվա հաջորդ հանդիպումը «Մինթ» ժամանակակից արվեստի թանգարանի փոխտնօրեն Էննի Կարլանոյի հետ էր: «Մինթ» թանգարանն առանձնանում է աշխարհի տարբեր երկրներից հավաքված ժամանակակից ստեղծագործողների աշխատանքների հետաքրքիր ցուցադրությամբ: Թանգարանում դեռևս չկա հայկական արվեստի որևէ ցուցանմուշ: Քննարկումների արդյունքում որոշվեց երկխոսություն սկսել այս հարցի շուրջ՝ առաջին հերթին թանգարանի հետ պարբերական էլեկտրոնային նամակագրություն վարելով և համապատասխան առաջարկություններ ներկայացնելով:

Օրվա երրորդ այցելությունը «Բեքթլերի անվան ժամանակակից արվեստի թանգարանում» էր, որտեղ հանդիպեցի թանգարանի փոխտնօրեն Քրիսթոֆեր Լոուինգի հետ: Այս թանգարանը նույնպես առանձնանում է 20-21-րդ դարերի ուշագրավ հավաքածուով (Էնդի Ուորհոլ, Միռո, Ջակոմետի և այլք): Քննարկումների արդյունքում որոշվեց երկխոսություն-բանակցություններ սկսել հիշյալ թանգարանի հավաքածուի ուշագրավ նմուշներից Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրություն կազմակերպելու շուրջ:

Հոկտեմբերի 19-ին այցելեցի «Լևինի անվան Նոր հարավի թանգարան» էր, որի կենդանի և ինտերակտիվ հիմնական ցուցադրությունը ներկայացրեց թանգարանի՝ հասարակայնության հետ կապերի գծով փոխտնօրեն Դեն Սփոքը: Թանգարանի հիմնական ցուցադրությունը նվիրված է Հյուսիսային Կարոլինա նահանգի և հատկապես Շարլոթ քաղաքի պատմությանը, սակայն իր ժամանակավոր ցուցադրություններով թանգարանը պարբերաբար անդրադառնում է նաև նահանգում և քաղաքում տեղի ունեցող հասարակական-քաղաքական կարևոր արդի իրադարձություններին:

Նույն օրը այցելեցի նաև «Մակքոլի անվան վիզուալ արվեստի կենտրոն», որտեղ էքսկուրսիա անցկացրեց թանգարանի աշխատակցուհի Էյփրիլ Վեհին: Թանգարանը ակտիվ համագործակցում է ժամանակակից ստեղծագործող արվեստագետների հետ և այդ առթիվ տարբեր դրամաշնորհային ծրագրեր է իրականացնում: Քննարկումների արդյունքում որոշվեց համապատասխան քայլեր ձեռնարկել հիշյալ ծրագրերում ժամանակակից հայ ստեղծագործողներին ներառելու շուրջ:

Հոկտեմբերի 20-ին այցելեցի երեք թանգարան. նախ՝ «Լույսի գործարան» կոչվող թանգարան, որտեղ խմբի անդամներին հյուրընկալեց թանգարանի հասարակայնության հետ կապերի գծով փոխտնօրեն Մայքաի Քեշը: Երկու ցուցասրահ ունեցող այդ թանգարանի հիմնական թեման ժամանակակից լուսանկարչական ստեղծագործություններն են:

Այնուհետև այցելեցի ամերիկյան հայտնի NASCAR ավտոսպորտի «Փառքի սրահ» թանգարան, որտեղ ուշագրավ էքսկուրսիա անցկացրեց թանգարանի գործադիր տնօրեն Ուինսթոն Քելին:

Օրվա երրորդ այցելությունը «Հարվի Գենթի անվան աֆրիկյան-ամերիկյան արվեստի և մշակույթի կենտրոնում» էր, որտեղ հանդիպեցի կենտրոնի տնօրեն Դեյվիդ Թեյլորի հետ: Վերջինս մանրամասն ներկայացրեց թանգարանի հիմնական

և ժամանակավոր ցուցադրությունները, ինչպես նաև պատմեց թանգարանի կողմից իրականացվող կրթական և դրամաշնորհային ծրագրերի մասին:

Հոկտեմբերի 21-ին Հյուսիսային Կարոլինա նահանգի մայրաքաղաք Շարլոթից մեկնեցի Մինեսոթա նահանգի Մինեապոլիս մայրաքաղաք:

Հոկտեմբերի 23-ին այցելեցի «Ուոքերի արվեստի կենտրոն» ժամանակակից արվեստի թանգարան, որտեղ թանգարանի կրթական և հանրային ծրագրերի ղեկավար Նիսա Մակքին, հանրային ծրագրերի համակարգողներ Ջաքլին Սթելմանը, Քևին Քարընը և Սարա Աբեյրը հանգամանորեն ներկայացրին թանգարանային մարքեթինգի ու մենեջմենթի մասին ունեցած իրենց մոտեցումներն ու դիտարկումները:

Օրվա հաջորդ այցս «Մինեապոլիսի արվեստի ինստիտուտ» թանգարանում էր, որտեղ հանդիպեցի թանգարանի կրթական ծրագրերի գծով պատասխանատու Քարլին Գարդների և հասարակայնության հետ կապերի ավագ համակարգող Ջեյմի Վան Նոսթրենդի հետ: Թանգարանը ասիական և եվրոպական մշակույթների բացառիկ հավաքածու ունի: Հայկական խմբի համար չափազանց հետաքրքիր էքսկուրսիա անցկացրեց թանգարանի ավագ գիտաշխատող Դեբրա Հենգսթրոմը: Քննարկումների արդյունքում որոշվեց համապատասխան քայլեր ձեռնարկել հիշյալ թանգարանում անցկացվող վերապատրաստման դասընթացներին Հայաստանի մասնագետների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ, ինչպես նաև երկխոսություն-բանակցություններ սկսել թանգարանի հավաքածուի ուշագրավ նմուշներից հայաստանյան որևէ թանգարանում ցուցադրություն կազմակերպելու շուրջ:

Օրվա վերջում այցելեցի Մինեսոթայում և դրա հարակից նահանգներում առկա միակ հայկական Սուրբ Սահակ եկեղեցին՝, որտեղ հյուրընկալ էի քահանա տեր Թադևոսի կողմից:

Հոկտեմբերի 24-ին նախ այցելեցի Մինեսոթայի համալսարանին պատկանող «Ուայսմենի արվեստի թանգարան», որի հավաքածուում հիմնականում ընդգրկված են 20-րդ դարի ամերիկյան մոդեռնիստները: Այստեղ ինձ հյուրընկալեց թանգարանի կրթական ծրագրերի գծով պատասխանատու Լեքսի Հերմանը:

Հաջորդ այցը «Ամերիկյան շվեդական ինստիտուտ» թանգարանում էր, որի մի խումբ աշխատակիցներ զարգացման և անդամագրության բաժնի ղեկավար Քրիստի Սթոփլեսթաթի գլխավորությամբ, մանրամասն էքսկուրսիա անցկացրեցին, որի ընթացքում ներկայացրին թանգարանում իրականացվող տարաբնույթ կրթական և դրամաշնորհային ծրագրերը:

Օրվա և «Միջազգային այցելու» ամբողջ ծրագրի շրջանակներում իրականացվելիք վերջին այցը «Միլլ Սիթի» ալրաղացի թանգարանում էր, որտեղ ինձ ընդունեց և թանգարանը ներկայացրեց աշխատակից Դեյվիդ Սթիվենսը:

Հոկտեմբերի 25-ին հայկական խմբի հետ միասին լքեցի ԱՄՆ Մինեսոթա նահանգի Մինեապոլիս մայրաքաղաքը:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- ***Յուրաքանչյուր թանգարանում առաջին հերթին քննարկել-ուսումնասիրել եմ թանգարանային մենեջմենթի և մարքեթինգի վարման ամերիկյան մեթոդներն ու փորձը: Մոտ երկու տասնյակ այցելությունների, հանդիպումների ու քննարկումների արդյունքում ստացված բազմաբնույթ գործնական և տեսական նյութը, անշուշտ, որոշակի փոփոխությունների ենթարկելով, կարելի է արդյունավետ կիրառել ՀՀ թանգարաններում:***

- *Ամերիկյան մի քանի թանգարանների հետ հստակ պայմանավորվածություններ ձեռք բերվեցին պարբերական համագործակցություն իրականացնելու հարցում:*

ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի

մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների

վարչության պետ՝

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ